ԽՍՀՄ ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏ

638.1
Ա

ՍԵՌԻԳՎԱԾ Է 1961 Թ.

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍԵՂՎԱՆՈՑՈՒՄ

Ա 4058
1242

Թարգմ. ՍՈՒՐ. ԹԱԴԵՈՍՅԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1937



ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՂՎԱՆՈՑՈՒՄ

Աշխատանքի կազմակերպումը կոլտնտեսության սպրանքային մեղվանոցի ամբողջ կազմակերպչական-արտադրական աշխատանքի մեջ կարևորագույն հարցն է հանդիսանում։ Միայն աշխատանքը ճիշտ կազմակերպելու դեպքում կարելի է ձեռք բերել աշխատանքի ամենամեծ արտադրողականություն, ստանալ առավելագույն արտադրանք, մեղուների ընտանիքների աճի ավելացում, գ. ա. կուլտուրաների փոշոտման ճիշտ կազմակերպում, միջոցների խնայողություն, դուլքի և նյութերի նպատակահարմար ոգտագործում։

Աշխատանքի կազմակերպման բրիգադային և մեղվանոցում աշխատող կոլտնտեսականների աշխատանքի գնահատումն աշխորերով՝ գործարքի հիման վրա, ստացված արտադրանքի քանակի և վորակի համաձայն, աշխատանքի ստախանովյան մեթոդները, սոցմրցումն ու հարվածայնությունը պետք է դրվեն մեղվանոցների աշխատանքի կազմակերպման հիմքում։

ՀԱՅՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԿԵՆՏՐԱՆՍԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ № 2

ԲՐԻԳԱԴԸ

Աշխատանքը մեղվանոցում, որպես կանոն, պետք է կատարվի միայն մեկ բրիգադով (անկախ մեղվանոցի խոշորությունից, կոլեկտիվությունը կազմակերպում է մեկ մեղվաբուծական բրիգադ), որը գլխավորում է բրիգադիրը (մեղվանոցի վարիչը)։ Խոշոր մեղվանոցները բաժանվում են ողակներով սպասարկվող խմբակների։ Ողակը ղեկավարում է ավագ մեղվապահը։

Միահավասար քանակի ընտանիք ունեցող մեղվանոցում բրիգադի մեծությունը շատ գործոններով է որոշվում, այն է՝ մեղվանոցում միատեսակ շրջանակների առկայությամբ, փեթակների միատիպությամբ, մեղվանոցի խմբակների (точков) մեկը-մյուսին մոտիկ լինելով, մեղվանոցի հիմնական աշխատանքն է շրջանում բարենպաստ յեղանակով, այդ բոլոր պայմանները թույլ են տալիս մեղվանոցի աշխատանքներն ավելի փոքրաթիվ բանող ձեռքերով կատարելու։ Ընդհակառակը, մեղվանոցի հաճախակի քոչելը, փեթակների և այլ սարքավորման անկոմպլեկտությունը, զանազան կալիբրի լինելը, ավելի շատ բանվորական ձեռք կպահանջեն, մանավանդ աշխատանքի յեռուն շրջանում։ Բրիգադները համալրվում են առաջին հերթին մեղվաբուծական

կուրսերն անցած և մեղվաբուծական փորձառություն ունեցող կոլտնտեսականներից։ Վորպես մեղվապահ և աշակերտներ՝ ամենայն կերպ պետք է մեղվանոց ներգրավել կանանց, կոմյերիտականներին և ընդհանրապես յերիտասարդությանը։ Անասնապահական բրիգադներն առանձնացվում են վոչ պակաս քան 3 տարի ժամանակով (Գ. Տ. արտելի կանոնադրության § 14)։

Թույլատրվում է դրսից վարձել միայն բարձր վորակի աշխատողների, որինակ, մեղվաբույծ տեխնիկների՝ խոշոր մեղվանոցները ղեկավարելու համար (Գ.Տ. արտելի կանոնադրության 7-րդ բաժին, կետ 13—14)։

ԲՐԻԳԱԴԻՐԻ (ՄԵՂՎԱՆՈՑԻ ՎԱՐԻՉԻ) ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բրիգադիրը (մեղվանոցի վարիչը) նշանակվում է կոլտնտեսության վարչության կողմից՝ լավագույն հարվածային մեղվապահներից, վոչ պակաս քան 2 տարի ժամանակով (Գ. Տ. արտելի որինակելի կանոնադրության § 23)։

Մեղվանոցի վարիչը կարող է ազատվել մեղուներին խնամելու ամիջական աշխատանքից, կամ թե աշխատանքի ավելի քիչ բեռնվածություն

ունենալ, քան թե մնացած մեղվապահները, միայն այն դեպքում, երբ մեղվանոցը մի քանի բաժանմունք, կամ թե խմբեր է ունենում, մանավանդ եթե այդ խմբերն իրարից հեռու են դասավորված։

Մեղվանոցի վարիչի պարտականությունների մեջ մտնում է՝

ա) բոլոր բաժանմունքների կամ խմբերի մեղվապահների ղեկավարումը թե կազմակերպչական և թե ագրոտեխնիկական տեսակետից։

բ) կոլտնտեսության կողմից հաստատած արտադրական պլանի հիման վրա՝ մեղվապահներին արտադրական առաջադրանքներ տալը ու դրանց կատարման ստուգումը։

գ) փորձի փոխանակման և աշխատանքը լավացնելու ասպարեզում միջոցառումներ մշակելու համար մեղվապահների հետ արտադրական խորհրդակցություններ կազմակերպելը.

դ) յուրաքանչյուր մեղվապահին աշխատանքի համար անհրաժեշտ կահույք, նյութեր և տարա կցելը.

ե) ստացված արտադրանքի հաշվառման կատարումը և դրա վորակը վորոշելը.

զ) մեղվապահների աշխատանքի հաշվառումը և աշխատած աշխորերի գրանցումը մեղվապահ-

կոլտնտեսականների աշխատանքային գրքույկներում.

ե) կոլտնտեսության վարչության և շրջանային մեղվաբույծ հրահանգչի հետ միասին մեղվանոցի գործերի հետ կապ ունեցող խնդիրների լուծումը.

ը) կոլտնտեսությունների մանր մեղվանոցների և տնամերձ մեղվանոցների սպասարկման ասպարեզում շրջանային հրահանգչին ողնություն ցույց տալը (հասարակական աշխատանքի կարգով).

թ) աշխատանքի սոցիալիստական ձևերի, սոցմրցման ու հարվածայնության, աշխատանքի առաջանավության մեթոդների կազմակերպումը մեղվանոցում։

ՄԵՂՎԱՊԱՇՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ա) Ընդունել բրիգադիրներից մեղուները, կահույքը, նյութերը, կազմել դրանց ցուցակը, իսկ ըստ նյութերի վարել թերթն ու մուտքը.

բ) մեղվանոցի տերիտորիայում և շենքում մաքրություն և կարգ պահպանել.

գ) ստանալ բրիգադից արտադրական առաջադրանքը, մշակել այն և իրեն համար աշխատանքի որացուցային պլան կազմել.

դ) բրիգադիրի հետ կատարել մեղրատու բույսերի և խմբի դասավորման վայրի հաշվառումը

յերեք կիլոմետր շառավիղով, կազմել ծաղկման որացույցը. տվյալ վայրում մեղուների մշտապես ամրացված թվով ընտանիքներ պահելը ձեռնտու չլինելու դեպքում մշակել քոչելու պլանը։

յե) անցկացնել բոլոր ագրոտեխնիկական միջոցառումները և մեղվապահ-բրիգադիրի ու մեղվապահ հրահանգչի ցուցումները.

զ) վարել մեղուների ամեն մի ընտանիքի վերաբերյալ կոնտրոլ արտադրական գրանցումները։

ե) Ուրիշ մեղվաբույծների հետ կնքել սոցմրցման պայմանագրեր.

ը) ոգնություն ցույց տալ ավելի քիչ պատրաստականություն ունեցող մեղվապահներին և նոր կադրեր (աշակերտներ) պատրաստել։

ԳՈՐԾԱՎԱՐՁ

Գ. Տ. արտելի օրինակելի կանոնադրության § 15-ի համաձայն, «բոլոր գ/տ աշխատանքներն իրագործվում են գործավարձի հիման վրա»։

Արտելի վարչությունը մշակում է և կոլտնտեսականները հաստատում են բոլոր գ/տ աշխատանքների կատարման նորմաները և յուրաքանչյուր աշխատանքի գնահատումը աշխորերով։

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

Ճիշտ հաշվառում կազմակերպելու համար կոլտնտեսային մեղվանոցի յուրաքանչյուր աշխատողին աշխատանքի սկզբին պետք է հայտնի լինի՝ արտադրական առաջադրանքը, աշխատանքի գնահատման միավորը, աշխորերի այն քանակը, որը գրանցվում է արտադրական առաջադրանքի կատարման համար։

Գ. Տ. արտելի կանոնադրության պարագ 15-ից.

«Շաբաթը վոչ պակաս քան մեկ անգամ բրիգադավարը հաշվարկում է արտելի յուրաքանչյուր անդամի կատարած վողջ աշխատանքը և սահմանված գնահատման նորմաների համաձայն, կոլտնտեսականի աշխատանքային գրքույկում գրանցում է կոլտնտեսականի վաստակած աշխորերի թիվը»։

«Արտելի վարչությունն ամեն ամիս կախ է տալիս արտելի անդամների ցուցակը՝ մատնանշելով ընթացիկ ամսում նրանց վաստակած աշխորերի թիվը»։

«Աշխատանքների տարեկան հանրագումարը և յուրաքանչյուր կոլտնտեսականի յեկամուտը, բացի հաշվետարի յեկամտից, անպայման վավերացնում են բրիգադիրը և արտելի նախագահը։

Արտելի յուրաքանչյուր անդամի վաստակած աշխատանքի ցուցակը, վոչ ուշ քան 2 շաբաթ առաջ՝ մինչ արտելի յեկամուտների բաշխումը հաստատող ընդհանուր ժողովը, կախ ե տրվում ի գիտություն բոլորին»։

Յեթե բրիգադը լավագույն աշխատանքի շնորհիվ դերակատարել ե պլանային առաջադրանքն ու լրիվ պահպանել ե մեղուներին կորուստից և այլն, այդ դեպքում «արտելի վարչությունն այդպիսի բրիգադի բոլոր անդամներին» (Գ. Տ. արտելի կանոնադրության §. 15), նրանց վաստակած աշխատանքի ընդհանուր քանակի 10%-ի սահմաններում, բրիգադում աշքի ընկնող հարվածայիններին մինչև 15%, իսկ բրիգադավարին և ֆերմայի վարիչին՝ մինչև 20%-ի սահմաններում աշխատանքի հավելում ե կատարում»։

Յեթե բրիգադը վատ աշխատանքի հետևանքով տրված արտադրական առաջադրանքից ավելի քիչ ե ստանում և չի պահպանում մեղուների ընտանիքները կորստից այդ դեպքում «այսպիսի բրիգադի բոլոր անդամների յեկամուտից արտելի վարչությունը հանուրդ (вычет) ե կատարում վաստակած աշխատանքի 19%-ի սահմաններում»։

Կլիմայական պայմանների հետևանքով մեղվաբերք չլինելը և այդ պատճառով արտադրական

առաջադրանքները չկատարելը չի կարող բրիգադի վաստակած աշխատրերի իջեցման պատճառ հանդիսանալ։

«Արտելի յեկամուտների բաշխումն անդամների մեջ՝ կատարվում է բացառապես արտելի յուրաքանչյուր անդամի վաստակած աշխատրերի քանակին համաձայն»։

«Մեղվանոցի աշխատողների թե նատուրալ և թե դրամական ավանսավորումը ընդհանուր հիմունքներով կատարում է կոլտնտեսության վարչությունը։»

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՈՐԻՆԱԿԵԼԻ ՆՈՐՄԱՆԵՐԸ ՄԵՂՎԱՆՈՑՈՒՄ

Ցելնելով մեկ մեղվապահին և նրա ոգնականին 60-100 մեղվի ընտանիքի սահմաններում տրվող բեռնվածության նորմայից, մեղվանոցի աշխատողներն աշխատանքի վարձատրման ապարեգում (աշխատրերով) հետևյալ խմբերի յեն բաժանվում։

1. 60-100 ընտանիք ունեցող մեղվանոցում, մեղվապահը (նույն ինքն մեղվանոցի վարիչը) դասվում է 4-րդ խումբը՝ 1,25 աշխատրի վարձատրությամբ։

2. 100-150 ընտանիք ունեցող մեղվանոցում մեղվապահը (նույն ինքը մեղվանոցի վարիչը)

դասվում է 4-րդ խումբը, 1,25 աշխորի վարձատրությամբ, մեղվապահի մեկ ոգնականը (մեկ տարուց ավելի ստաժ ունեցող. մեկ աշխորի վարձատրությամբ, իսկ մյուս ոգնականը (աշակերտ)— 2-րդ խումբը՝ 0,50 — 0,75 աշխորի վարձատրությամբ։

3). 150—200 ընտանիքից բաղկացած մեղվանոցում մեղվապահ — բրիգադիրը (նույն ինքը մեղվանոցի վարիչը) դասվում է 5-րդ խումբը՝ 1,5 աշխորի վարձատրությամբ, մեղվապահը (առանձին խմբի) — 4-րդ խումբը՝ 1,25 աշխորով։

Մեղվապահի մեկ ոգնականը (մեկ տարուց վոչ պակաս ստաժ ունցող) մեկ աշխորով, և մյուս ոգնականը (աշակերտ) 0,50 — 0,75 աշխորով։

4. 200—300 ընտանիքից բաղկացած մեղվանոցում մեղվապահ-բրիգադիրը (նույն ինքն մեղվանոցի վարիչը) դասվում է 5-րդ խումբ՝ 1,5 աշխորի վարձատրությամբ, յերկու մեղվապահները (առանձին խմբերի) 4-րդ խումբը՝ 1,25 աշխորով, մեղվապահների յերկու ոգնականները՝ 2-րդ խումբը — 1,25 աշխորով, և մեկ ոգնականը (աշակերտ) 2-րդ խումբը՝0,75 աշխորով։

5. 300 — 400 ընտանիք ունեցող մեղվանոցում մեղվապահ-բրիգադիրը (նույն ինքն մեղվանոցի վարիչը) դասվում է 6-րդ խումբը՝ 1,75 աշխորի վարձատրությամբ։ Յերկու մեղվապահները (առանձին խմբերում) — 4-րդ խումբը 1,25

աշխորով, մեղվապահի յերկու ոգնականները՝ 3-րդ խումբը — մեկական աշխորով, և մեկ ոգնականը (աշակերտ) 2-րդ խումբը՝ 0,50 — 0,75 աշխորով։

6. 400-ից ավելի ընտանիք ունեցող մեղվանոցը պետք է մեղուների խնամքի հետ կապ ունեցող ամիսական աշխատանքներից ազատված վարիչ ունենա։ Խոշոր մեղվանոցների վարիչները պետք է լինեն միանգամայն վորակյալ, արտադրական աշխատանքների մեծ ստաժով և տեվական (վոչ պակաս քան 6 ամիս) հատուկ դասընթաց անցած աշխատողներ։ Նրանք դասվում են 6-րդ խումբը, նրանց վարձատրությունը՝ 1,75 աշխոր։

Մեղվանոցի աշխատակիցներին այս կամ այն խումբը դասելիս անհրաժեշտ է հաշվի առնել այն վորակը (կվալիֆիկացիան), վորը պահանջվում է նրանից արտադրական աշխատանքները կատարելու համար։ Որինակ՝ ռեկորդիստ — ընտանիքներ ընտրելու ասպարեզում տրված առաջադրանքը կատարելու, մասնավորեն մայր մեղուներ ստանալու, ինչպես և այդ մայր մեղուներից ստացված սերունդի միջոցով նրանց ստուգելու, արհեստական ձագատվության, հաշվառման և ֆենոլոգիկ դրանցումներ կատարելու համար և այլն. ավելի բարձր վորակ

պահանջող այդ վորակն ունեցող և այդ խնդիրները կատարող աշխատողները, թեկուզ և փոքր մեղվանոցներում, 5-րդ խմբից ցած չպետք է դասվեն։

Մեղվանոցի աշխատողների բաժանումը խմբերի՝ ցույց տալով մոտավոր վարձատրությունը (աշխորերով՝ յուրաքանչյուր աշխատողի համար), բերվում է այստեղ նրա համար, վոր բրիգադի աշխատողների միասին վաստակած աշխորերը նրանց միջև համեմատականորեն բաշխվեն։ Որինակ. 4 հոգուց բաղկացած բրիգադի վաստակած 900 աշխորերը բաշխելու համար գումարում ենք — բրիգադիրը՝ 1,5 աշխոր, մեղվապահը՝ 1,25, ոգնականը՝ 1, աշակերտը՝ 0,75=4,5 աշխոր։

Միասին վաստակած աշխորերի քանակը,((որինակ 900-ը) բաժանում ենք 4,5-ով և ստացած 200 թիվը բազմապատկում՝

բրիգադիրի	համար՝	200×1,5 =300	աշխոր
մեղվապահի	»	200×1,25=250	»
ոգնականի	»	200×1 =200	»
աշակերտի	»	200×0,75=150	»

մեղվանոցում աշխատող աշակերտները և անհրաժեշտության դեպքում մեղվապահներին ոգնելու համար մեղվանոց ուղարկվող ժամանակավոր

աշխատողները վարձատրվում են գործավարձով, մեղվանոցում իրենց կատարած աշխատանքների գնահատման համաձայն։

Կոլտնտեսության ապրանքային մեղվանոցներում աշխատողների աշխատանքը պետք է կազմակերպված լինի խմբակային և անհատական գործավարձի հիման վրա։ Աշխորները գրանցվում են.

I. ԱՄԱՌԱՅԻՆ ՍԵԶՈՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՄԵՂՈՒՆԵՐԻՆ ԽՆԱՄԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Գարնանը մեղուներին դուրս բերելուց մինչև նրանց ձմեռվա համար տեղավորելը մեկ ձմեռող մեղվի ընտանիքին 2-ից մինչև 3 աշխոր, իսկ ածի ամեն մի ընտանիքին (ձագ, պարս) 50-ական % ձմեռող մեղվի ընտանիքի աշխորերի դիմաց, այսինքն 1-1,5 աշխոր։

Նույն թվում հիմնական աշխատանքներ.

ա) Խմբի նախապատրաստումը գարնանը ձյունը դեն տանելը, թիով մաքրելը, ավլելը, փեթակների արանքում գտնվող ճանապարհներին ավազ շաղ տալը և այլն - մեկ մեղվի ընտանիքին 0,04 աշխոր։

բ) Խումբը մաքուր պահպանելը ամառային սեզոնում(մայիս-սեպտեմբեր՝ 0,01-ական աշ-

խոր) մեկ մեղվի ընտանիքին 0,05 աշխորի հաշվով։

գ) Մեկ փեթակ դնելու համար ցցեր պատրաստելը, դրանց խփելը և հարթելը-0,025։

դ) Մեկ մեղվի ընտանիքը ձմեռելու տեղից դուրս բերելը (ընտանիքը նախապատրաստելը, տեղափոխելը, տեղավորելը, դիտողություն փեթակի թռիչքներ կատարելու (облет) վերաբերմամբ, մեղվի ընտանիքի թռուցիկ զննություն, փեթակի մուտքերի մաքրում և այլ աշխատանքներ)-0,06 աշխոր։

ե) Գարնանային լրիվ ստուգում (բնի զննում, դրա լայնանալը կամ նեղանալը, տաքացնելը, հատակներն ու շրջանակները մաքրելը, դրանց փոխելը և ստուգման միջոցով յերեվան բերված այլ մասնակի թերություններին ուղղումը մեկ մեղվի ընտանիքին՝ 0,1 աշխոր։

զ) Մայր մեղվի ձվատվության վրա հսկելը և անհրաժեշտության դեպքում մայր մեղվի փոխարինումը՝ 0,05 աշխոր։

է) Գարնանը կերի պաշարը ստուգելը, պաշարները լրացնելը և լրացուցիչ կերակրելը՝ 0,01 աշխոր։

ը) Թույլ ընտանիքների ուժեղացումը՝ մեղուներ՝ վորդ ունեցող շրջանակներ դնելով-0,05 աշխոր։

Թ) Ընտանիքի տեղափոխումը (перегон) քթոցավոր փեթակից շրջանակավոր փեթակը-0,2 աշխատ։

Ժ) Ընտանիքի տեղափոխումը շրջանակավոր փեթակից այլ շրջ. փեթակ՝

1) Մի սիստեմանի փեթակ 0,1

2) Զանազան սիստեմի... 0,3

3) Մեղուների տեղափոխումը՝ հիվանդություններով դեմ պայքարելիս-0,4

Ժա) Փեթակի ախտահանումը-0,1։

Ժբ) Զեչ (չորուկ) կտրելը և բնաշրջանակի մեջ տեղավորելը-0,05։

Ժգ) Մեղվի ընտանիքի զննումը՝ մեղրաբերքին նախապատրաստվելու համար-0,05։

Ժդ) Մագազինի նախապատրաստումը (զննումը, լվացումը, չեչի դասավորումը, թեթեվ վերանորոգում և այլն) և մագազինը փեթակի կորպուսի վրա դնելը-0,07։

Ե) Մագազինը չորացնելը (շրջանակները չորացնելու համար ընտանիքում տեղավորելը, մագազինը լվանալը, շրջանակները հանելը) դադան-Բլաթի մեկ մագազինի համար-0,2։

Ժզ) Բնի շրջանակները մաքրելն ու չորացնելը և պահելու համար սարելը, մեկ շրջանակին-0,03։

Ժե) Լրիվ աշնանային ստուգում և բների սարում՝ ձմեռելու համար (բոլոր շրջանակների

ՀՍՍՌ ԳԻՏ. ԱԿԱԴԵՄԻԱ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ № 2
ԱԿԱԴԵՄԻԱ
А 1/4058
1242

վերազննում-ընում, կերի քանակը վորոշելը, կերը լրացնելը, բունը նեղացնելը, փեթակը տաքացնելը) մեկ մեղվի ընտանիքին-0,1։

ժը) Ձմեռանոց նախապատրաստելը (մաքրելը, հող լցնելը, սվաղելը, սպիտակացնելը, ախտահանելը և այլն) հաշվելով ամեն մի ընտանիքին՝ 0,03։

ժթ) Մեղվի ընտանիքների նախապատրաստումը ձմեռանոց տանելու համար (մեղվի ընտանիքի նախապատրաստումը տեղափոխելու համար, տեղափոխումը և դասավորումը ձմեռանոցում)-0,05։

ի) Մեղվի ընտանիքները ձմեռելու համար նախապատրաստելը և տեղավորելը՝

1) Քուրքերում (хокуцнок)-0,05

2) Հողակույտերում (бурты)... 0,03

3) Ձյան տակ 0,02

իա) Արտադրական գրանցում և հաշվառում տանելը (1, 2 և 3 ձևերով), բաժանելով ըստ սեզոնների, մեղուների ամեն մի ընտանիքի համար՝

1) Մեղուներին զարնանը դուրս բերելուց մինչև գլխավոր ստուգումը 0,04

2) Գլխ. ստուգումից մինչև մեղրաբերքը .0,06

3) Գլխավոր մեղրաբերքը 0,05

4) Գլխ. աշնանային ստուգումը՝ ձմեռանոցում

տեղավորելու հետ 0,05

ի) Նախապատրաստական և ամառային մանր աշխատանքներ (մեղվաբուծական տնակի, մեղուները և կահույքը մաքուր պահելը, գողության և մեղուների հարձակման կանխումը, խմոցները ջուր բերելը, մեղվանոցի դռները շրջապատելը և այլն), հաշվելով մեկ մեղվի ընտանիքին 0,5 աշխատ։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Շատ մանր (մասնատված) աշխատանքներ այստեղ չեն հիշատակված — մեղվանոցում աշխատանքները դրանցելու պրոցեսում այդ աշխատանքները կարելի է համախմբել ըստ հիմնական խմբերի։

II. Գ. Տ. ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐԸ ՓՈՇՈՏԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՄԵՂՈՒՆԵՐԻՆ ԱՅԼ ՎԱՅՐ ՏԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

(Հատուկ լրացուցիչ կերակրումով — «դրեսիրովկա»)։ Ընտանիքների, տրանսպորտի, խմբի նախապատրաստումը, մեղուների ընտանիքների դասավորումը և այլն, մեկ ընտանիքին՝

ա) լերեքնուկի վրա — 4,0

բ) այլ կերախոտերի վրա — 3,0

գ) գեղարուսյաների վրա — 3,0

դ) այգիների և բոստանների վրա — 3,0

ե) հնդկացորենի, արևածաղկի և այլ դաշտային

կուլտուրաների վրա 2,0

զ) մեկ մեղվի ընտանիքի քոչելը մեղրաբերքի համար (առանց հատուկ լրացուցիչ կերակրման «դրեսիրովկայի») — 1,5։

III· ՁՄԵՌԵԼՈՒ ՎԱՅՐՈՒՄ ԽՆԱՄԵԼՈՒ ՀԱՄԱՐ

ա) Ձմեռելու վայրում պահպանելն ու խնամելը ամբողջ ձմեռային սեզոնի ընթացքում, հաշվելով ձմեռանոցում տեղավորելու մոմենտից մինչեվ գարնանը դուրս բերելը (ձմեռանոց հաճախելը, ջերմությունը չափելը, կրծողների դեմ պայքարելը, անբարենպաստ վիճակում գտնվող ընտանիքների դրությունը ուղղելը), դիտողությունների գրանցումը և այլն, մեկ ընտանիքին . . . . . 1,0 աշխատրով։

բ) Ձմեռային հարկադրված թռիչքը շենքում (սենյակը նախապատրաստելը, ընտանիքներին նախապատրաստելը, թռիչքն անցկացնելը, և այլն) — 0,5։

գ) Մայր մեղուների ձմեռելը, (ընտանիքի նուկլեուս փեթակի պատրաստումը, թռիչքն անցկացնելը և այլն) — մեկ մայրը՝ 0,4 աշխատ։

ԾԱՆՈԹՈՒՅՈՒՆ.— Ձմեռելու համար աշխատրերը լրիվ վարձատրվում են միայն այն դեպքում, երբ մեղուների ընտանիքները ձմեռվա ընթացքում 100% -ով պահպանվել են։

Մեղվապահի հանցանքով փչացած ամեն մի ընտանիքի համար մեղվապահից պահվում է աշխորերի քանակ, հաշվի առնելով մեղվի ընտանիքի (միայն մեղուներն առանց փեթակի, չեչի և կերերի) միջին արժեքը, (մոտավորապես 30—50 ռուբլի) և անցած սեզոնի աշխորի միջին արժեքը կոլտնտեսությունում։ Մեղվի ընտանիքի արժեքը վորոշվում է ձմեռանոցում տեղավորվելուց առաջ և գրվում է մեղուներին ձմեռանոց հանձնելու և ընդունելու արձանագրության մեջ։

Որինակ արձանագրության համաձայն 5 և 6 ընտանիքների արժեքը վորոշված է 40-ական ռուբլի։ Ձմեռելու ժամանակ մեղվապահի հանցանքով այդ լերկու ընտանիքը վոչնչացել են։ Անցած տարի կոլտնտեսությունում աշխորի միջին արժեքը 8 ռուբլի լեր։ Ցերկու վոչնչացած ընտանիքի արժեքը 80 ռուբլին, պետք է բաժանել 8-ի, ստացած 10-ը վորոշում է աշխորի քանակը, վորը պետք է լեռ պահվի հանցավոր մեղվապահից։

IV. ՄԹԵՐՔԻ ՔԱՆԱԿԻ ՅԵՎ ՎՈՐԱԿԻ ՀԱՄԱՐ

Մեղվի ընտանիքի աճը մեղվանոցում.

1. Բնական ձագաստվություն (պարսելը) ձագ

գնելը), տեղավորելը, պարսելու նախապատրաստումը, պարսը վերցնելը, փեթակի և շրջանակների նախապատրաստումը չեչով և մոմաթերթով՝ պարսը տեղավորելու համար, պարսը տեղավորելը կամ ընտանիքի մեջ վերադարձնելը և այլն) մեկ պարսին՝ 0,5 աշխոր։

2· Արհեստական ձագաստություն։

Արհեստական պարսը բոլոր յեղանակներով, այն պայմանով, որ ստացված պարսը մեղրաբերքի ժամանակ զարգանա, դառնա նորմալ ընտանիք և տվյալ մեղվանոցի ձմեռող ընտանիքի միջինից վոչ ցածր ապրանքային մեղր տա —1,0 աշխոր։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Պարսի գնահատությունն իջեցվում է պարսի տված ապրանքային մեղրի իջեցման, տվյալ մեղվանոցի ձմեռող մեղվի ընտանիքի տված ապրանքային մեղրի միջին քանակի համեմատ։ Որինակ՝ յեթե ձմեռող մեղվի ընտանիքի մեղրի միջին բերքը 20 կիլոգրամ է, իսկ պարսը տվել է 10 կիլոգրամ մեղր, այդ դեպքում աշխոների վերջնական հաշվարկման ժամանակ պետք է պարսի գնահատումը իջեցնել 0,5 աշխորով։

Նոր մեղվաընտանիքների խնամքի համար աշխորեր տալու մասին տես 1-ին հատվածը։

3. Բեղունակ մեկ մայր մեղու ստանալը (արհեստական մայրաբների պատրաստելը, վորդը տեղափոխելը, մայրաբներ կտրելը, հասունացման

համար տեղավորելը, մայր մեղվի բեղմնավորման ստուգումը) — 0,75-ից մինչև մեկ աշխատանք։

4. Մեկ ցենտներ համախառն մեղրի համար, հաշվելով ամբողջ քամած, ձմեռվա համար և մեղրահացերի (խորիսխ) մեջ թողած ֆոնդի մեղր՝ 5 աշխատանքի նորմայով նույն այդ թվում մեղրը քամելը, պատրաստելը, առաքումը, մեղրաքամի և տարայի լվանալը, մեղրահացի (խորիսխ) դասավորելը, քամելը, մեղրն ամանները լցնելը, մեղրի ամանների բերանը փակելը և դրոշմանշումը) մեկ կիլոգրամի համար՝ 0,01 աշխատանք։

Մոմի համար.

ա) Մեկ կիլոգրամ մոմի համար 1,5 աշխատանք։

բ) Մեկ կիլոգրամ չեչի համար 0,75 աշխատանք։

գ) Մեկ կիլոգրամ մնացորդի կամ տականքի համար . . . . . 0,2 աշխատանք

(նույն թվում կատարվող աշխատանքները՝ կառուցողական շրջանակը տեղավորելը, կտրատանքներն ու փշրանքները հավաքելը, շրջանակ կառուցելը և այլն) մեկ կիլոգրամ մոմի համար 0,5 աշխատանք։ Բնի և մագազինի շրջանակների խոտանումը, անպետք շրջանակներից չեչ կտրելը, չեչի նախապատրաստումը հալելու համար և այլն, մեկ կիլոգրամ չեչի համար՝ 0,01 աշխատանք։

Մոմահումուլթը արհեստական մոմահալոցում

հալելը — մեկ կիլոգրամ մոմին՝ 0,01 աշխատ։
Նույնը այլ մոմահալոցներում մեկ կիլոգրամին՝ 0,02 աշխատ։

V. ՄԵՂՐԱՏՈՒ ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՄԵԾԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

ա) Մեղրատու ծառեր տնկելը (լորենի, պտղատու ծառեր, փոսերի փորելը, պլանավորումը, տնկելը, սկզբնական ջրելը և այլն) — մեկ ծառի համար, նայած հասակին, 0,1 — 0,5 աշխատ։

բ) Հատապտղի և դեկորատիվ թփուտ տնկելը, մեկ թուփը — 0,05 աշխատ։

գ) Բանջարանոցային և բոստանի կուլտուրաներ ցանելն ու տնկելը — բանջարանոցային բրիգադներին տրվող վարձատրության հաշվով։

դ) Մեղրատու ոգտակար բույսեր ցանելը — դաշտային բրիգադների հաշվով։

ե) Մեղրատուներ տնկելը՝ ճանապարհները պաշտպանելու, դեկորատիվ և պահպանող ցանկապատերի համար և այլն, քառ. մետրին — 0,01 աշխատ։

VI. ՄԱՆՐ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԸ, ՄԵՂՎԱՆՑՈՒՄ ՓԵԹԱԿԸ ԿԱՐԳԻ ԲԵՐԵԼԸ ՅԵՎ ՎԵՐԱՆՈՐՈԳԵԼԸ, ՇՐՋԱՆԱԿՆԵՐԻՆ ՄՈՄԱՔԵՐԹ ՓԱԿՑՆԵԼԸ, ՏԱՔԱՆՈՑՆԵՐԸ ՆՈՐՈԳԵԼԸ՝

ա) Կոնտրոլ փեթակի համար մեկ ծածկոցի կառուցումը — 3 աշխոր

բ) Մեկ խմոց սարքավորելը, պատվանդան շինելը, ծորակ մացնելը, տախտակ շինելը, խմոցի առանձին մասերն ամրացնելը և այլն — 2 աշխոր։

գ) Դադան — Բլաթի մի պատ ունեցող փեթակի շինելը՝ մեխերով (առանց ծեփելու և ներկելու)

1) Ձեռքով 3,5

2) Ցիրկուլյար յեղանակով 2,5

3) Փեթակը մեկ անգամ ծեփելը և ներկելը 0,5

4. Հիմնական վերանորոգում (ամբողջ փեթակը կազմատելու և փեթակի պատերի ու կտուրի նոր մասեր դնելու պայմանով) — 1,0-ից 1,5 աշխոր։

դ) Փեթակի ընթացիկ վերանորոգում (փեթակը չի կազմատվում, այլ փոխվում են հատակի, կտուրի պատերի առանձին մասերը և այլն) — 0,1 — 0,5

յե) Փեթակի համար տաքանոցներ սարքավորելիս՝

1) մեկ բարձիկ 0,05
2) վերին խսիր 0,04
3) կողքի խսիր 0,03
գ) Մեկ շրջանակ ձեռքով խփելը՝
1) շրջանակի համար նոր ձողիկներ (плонка) շինելը 0,02
2) պատրաստի պլանկաներից 0,003
ե) Մեկ շրջանակի վրա յերկաթալար քաշելը՝
1) ծակիչով անցքեր պատրաստելու դեպքում 0,007
2) բզով անցքեր բանալիս 0,005
ը) Մեկ շրջանակին մոմաթերթ փակցնելը 0,005

VII. ՊԱՇԱՊԱՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒՅՈՒՆԸ

Մեղվանոցը պահպանելու նպատակով հատուկ առանձնացրած պահապանների աշխատանքի գնահատումը սահմանում է յուրաքանչյուր առանձին դեպքում կոլտնտեսության վարչությունը, նայած մեղուների ընտանիքների թվին, մեղվանոցի դասավորմանը և տեղական պայմաններին։

Նշված որինակելի նորմաներն որիենտիր են և, նայած տեղական պայմաններին, մեղվանոցը շենքով և կահույքով կահավորված լինելուն, այդ պայմանները կարող են փոփոխվել՝ լրացվելով, ավելացվելով և պակասեցվելով։ Մեղվանոցի բրի-

գաղիրի աշխորերի քանակը սահմանվում է հարմարացնելով այն ավյալ տնտեսության այլ ճյուղերի բրիգադիրներին տրվող աշխորերի նորմաներին և մեղվաբուծության տեսակարար կշռին, վորը նա գրավում է կոլտնտեսության այդ ճյուղերի մեջ։

Առանց հաշվի առնելու մեղվապահների վորակը, ավյալ մեղվանոցի կոնկրետ արտադրական պայմանները, առանց այդ պայմանների արտադրական խորհրդակցություններում մշակելու յեվ առանց արտադրանքի նորմաները կոլտնտեսության ժողովի կողմից քննելու, արգելվում է մեխանիկորեն ընդունել «որինակելի նորմաները»։

Միայն կոլտնտեսականների լայն մասսաների կոլեկտիվ ստեղծագործությունը, առաջավոր մեղվանոցներին, ստախանովյան մեղվաբուծներին հասնելը հնարավորություն կտան մեղվանոցում աշխատանքի այնպիսի նորմաներ մշակելու վորոնց կիրառումը կստեղծի կոլտնտեսային մեղվաբուծության բարձրագույն արդյունավորություն։

VIII. ՍՈՑՄՐՑՈՒՄԸ ՅԵՎ ՀԱՐՎԱԾԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ

Յուրաքանչյուր կոլտնտեսային ապրանքային մեղվանոցում պետք է կազմակերպված լինի սոցմրցումն ու հարվածայնությունը։ Յուրաքան-

չյուր կոլտնտեսային ապրանքային մեղվանոց, յուրաքանչյուր բրիգադիր և մեղվապահ պետք է սոցմրցման պայմանագիր կնքի մեղվանոցի արտադրական պլանը և յուրաքանչյուր կոլտնտեսականին տրված արտադրական առաջադրանքը կատարելու և գերակատարելու համար։

Միայն սոցմրցմամբ և հարվածայնությամբ, աշխատանքի ստախանովյան մեթոդների միջոցով կարելի է աշխատանքի առավելագույն արտադրողականություն ձեռք բերել, ստանալ վորքան կարելի է շատ մեղր և մոմ, լավ կազմակերպել գյուղատնտեսական կուլտուրաների բեղմնավորման (փոշոտման) աշխատանքը, պահպանել մեղուներին ձմեռային հիվանդություններից և կորուստից, մեղուների ընտանիքների ամենաբարձր աճ ձեռք բերել, խնայողաբար ու նպատակահարմար ոգտագործել մեղվանոցի կահույքն ու նյութերը։

ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ № 2
ԱԿԱԴԵՄԻԱ

Գատ. խմբագիր՝ Հար. Պետրոսյան
Տեխն. խմբագիր՝ Ի. Վարդանյան
Սրբագրիչ՝ Մ. Մարտիկյան

Գլավլիտ-ի գրանցումը՝ Կ—4683 Հրատ 4351
Գատվեր 1262 Տիրաժ 1000
Թուղթ. 74×110, Տպագրական 1 մամուլ.
Մեկ մամուլում 40960 նիշ· Հեղինակային 1 մամ.
Հանձնված է արտադրության 16 դեկտեմբերի 37 թ.
Ստորագրված է տպելու 8. դեկտեմբերի 37 թ.

Պետհրատի տպարան, Երևան, Լենինի № 65

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0038303

[064]

565

A I/4058